



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ԱՎԵՏԻՍՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(Գանգաղ թիվ 13479/11)

ՎՃԻՌ

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

10 նոյեմբերի 2016թ.

Սույն վճիռը վերջնական է դառնում Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքերում: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:

Ավետիսյանն ընդդեմ Հայաստանի գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Առաջին բաժանմունք),
հանդես գալով Պալատի հետևյալ կազմով՝

Միրյանա Լազարովա Տրայկովսկա [Mirjana Lazarova Trajkovska]՝ *Նախագահ,*

Լեդի Բիանկու [Ledi Bianku],

Լինոս-Ալեքսանդր Սիցիլիանոս [Linos-Alexandre Sicilianos],

Ալեշ Պեյխալ [Aleš Pejchal],

Արմեն Հարությունյան [Armen Harutyunyan],

Պաուլին Կոսկելո [Pauliine Koskelo],

Թիմ Այքե [Tim Eicke]՝ *դատավորներ,*

և Ռենատա Դեգեներ [Renata Degener]՝ *Բաժանմունքի քարտուղարի տեղակալ,*

2016 թվականի հոկտեմբերի 18-ին անցկացնելով դռնփակ
խորհրդակցություն,

կայացրեց հետևյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը.

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Սույն գործը հարուցվել է «Մարդու իրավունքների և հիմնարար
ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (Կոնվենցիա) 34-րդ
հոդվածի համաձայն, Հայաստանի Հանրապետության քաղաքացի պրն Դավիթ
Ավետիսյանի (դիմումատու) կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ 2011
թվականի փետրվարի 19-ին Դատարան ներկայացված գանգատի (թիվ 13479/11)
հիման վրա:

2. Դիմումատուին ներկայացրել է Երևանում գործող իրավաբան պրն
Հ. Ալումյանը: Հայաստանի Հանրապետության կառավարությունը

(Կառավարություն) ներկայացրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն Գ. Կոստանյանը:

3. Դիմումատուն, մասնավորապես, պնդել է, որ իրեն զրկել են արդար դատաքննության իրավունքից, քանի որ ինքը դատապարտվել է այն վկաների նախաքննական ցուցմունքների հիման վրա, որոնց ինքը հնարավորություն չի ունեցել հարցաքննելու: Նա նաև այլ բողոքներ է ներկայացրել իր դեմ հարուցված քրեական վարույթի և իր դատապարտման առնչությամբ:

4. 2013 թվականի հուլիսի 11-ին դիմումատուի՝ իր դեմ ցուցմունք տված վկաներին հարցաքննելու հնարավորություն չունենալու վերաբերյալ բողոքն ուղարկվել է Կառավարություն, իսկ գանգատի մնացած մասը հայտարարվել է անընդունելի՝ Դատարանի կանոնակարգի 54-րդ կանոնի 3-րդ կետի համաձայն:

ՓԱՍՏԵՐԸ

1. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

5. Դիմումատուն ծնվել է 1971 թվականին: 2011 թվականի փետրվարի 19-ին, երբ նա գանգատը ներկայացրել է Դատարան, գտնվել է Երևանի քրեակատարողական հիմնարկներից մեկում, որտեղ կրել է իր ազատազրկման ձևով պատիժը:

6. 2009 թվականի ապրիլի 27-ին դիմումատուն իր ընկեր Դ. Թ.-ի և երկու այլ անձանց՝ Դ. Օ.-ի և Մ. Ս.-ի հետ գնացել է Գորիս քաղաք՝ իր ընկեր Մ. Խ.-ին տեսակցելու, որն այնտեղ քրեակատարողական հիմնարկում կրում էր իր պատիժը:

7. Ժամանելուց հետո քրեակատարողական հիմնարկի վարչակազմը հրաժարվել է թույլ տալ նրանց տեսնել Մ. Խ.-ին: Այնուամենայնիվ, նրանց թույլ են տվել հանձնել ծանրոց՝ նրան փոխանցելու համար:

8. Դիմումատուն Դ. Թ.-ին, Դ. Օ.-ին և Մ. Ս.-ին գումար է տվել՝ Մ. Խ.-ի համար ուտելիք գնելու համար, իսկ ինքը մնացել է քրեակատարողական հիմնարկում՝ պաշտոնական ընթացակարգերը կատարելու համար: Նա ստորագրել է նախազգուշացում՝ դատապարտյալին արգելված իրեր փոխանցելու համար նախատեսված պատասխանատվության մասին: Դ. Թ.-ն, Դ. Օ.-ն և Մ. Ս.-ն բերել են տորթ, որը գնել էին տեղի խանութներից մեկից: Տորթը հանձնել են վարչակազմին որպես ծանրոց՝ Մ. Խ.-ին փոխանցելու համար:

9. Ծանրոցի հետագա զննման արդյունքում պարզվել է, որ տորթի մեջ եղել է հեղուկով լի մեկանգամյա օգտագործման ներարկիչ:

10. Նույն օրը քննիչը որոշել է նշանակել հայտնաբերված իրերի դատաբժշկական փորձաքննություն:

11. 2009 թվականի ապրիլի 29-ին փորձագետը տվել է իր եզրակացությունը, որի մեջ նշել է, որ փորձաքննության ենթարկված նյութերը թմրամիջոցներ են եղել:

12. 2009 թվականի ապրիլի 30-ին դիմումատուի դեմ հարուցվել է քրեական գործով վարույթ:

13. 2009 թվականի մայիսի 11-ին դիմումատուին մեղադրանք է առաջադրվել խոշոր չափերով թմրամիջոց ձեռք բերելու և իրացնելու համար: Դիմումատուն հերքել է իրեն առաջադրված մեղադրանքը: Իր փաստարկն այն է եղել, որ ինքը տորթը փոխանցելու պահին ծանրոցների ընդունման սենյակում չի գտնվել:

14. Նախաքննության ընթացքում Մ. Ս.-ն, Դ. Թ.-ն և Դ. Օ.-ն հարցաքննվել են որպես վկաներ:

15. Հարցաքննության ժամանակ Մ. Ս.-ն նշել է, որ ինքը, Դ. Թ.-ն և Դ. Օ.-ն տորթ են գնել, որը տվել են դիմումատուին: Դրանից հետո իրենք մտել են այն սենյակ, որտեղ ընդունվում են դատապարտյալների համար նախատեսված

ծանրոցները, և ինքը տեսել է, թե ինչպես է դիմումատուն ներարկիչը դնում տորթի մեջ և սերուցքը տարածում այնպես, որ այն չերևա:

Դ. Թ.-ն և Դ. Օ.-ն նշել են, որ մինչև տորթը քրեակատարողական հիմնարկի վարչակազմին հանձնելն իրենք այն տվել են դիմումատուին:

Գ. Բ.-ն՝ քրեակատարողական հիմնարկի աշխատակիցը, որը ստուգել էր ծանրոցը, հարցաքննության ժամանակ նշել է, որ նա հեղուկով լի ներարկիչ է հայտնաբերել այն տորթի մեջ, որը պետք է փոխանցվեր Մ. Խ.-ին:

16. 2009 թվականի նոյեմբերի 4-ին դիմումատուի հետ կատարված առերեսման ժամանակ Մ. Ս.-ն պնդել է նախկինում տված իր ցուցմունքները:

17. Առերեսումից հետո դիմումատուն բողոք է ներկայացրել դրա անցկացման եղանակի վերաբերյալ: Նա իր բողոքում նշել է, *inter alia* (ի թիվս այլնի), որ քննիչը չի արձանագրել իր անմեղությունը հաստատող մի շարք կարևոր ցուցմունքներ, և որ ինքը Մ. Ս.-ին ուղղել է մի քանի հարցեր, որոնք չեն արձանագրվել և անպատասխան են մնացել: Այս առնչությամբ Սյունիքի մարզի դատախազի տեղակալը 2009 թվականի նոյեմբերի 6-ին հարցաքննել է դիմումատուին և արձանագրել է նրա բողոքները: Դիմումատուն նաև պահանջել է, որ կատարվի մեկ այլ առերեսում: Նրա բողոքները մնացել են անպատասխան:

18. 2009 թվականի նոյեմբերի 19-ին կազմվել է մեղադրական եզրակացություն, և գործը փոխանցվել է Գորիսում գտնվող՝ Սյունիքի մարզային դատարան՝ դատական քննության նշանակելու համար: Այն անձանց ցանկում, որոնք պետք է հրավիրվեին դատական քննությանը, ընդգրկված են եղել Կապանի բնակիչներ Մ. Ս.-ն, Դ. Թ.-ն, Դ. Օ.-ն և Գ. Բ.-ն, որը բնակվում էր Գորիսում:

19. 2009 թվականի նոյեմբերի 26-ին Սյունիքի մարզային դատարանի դատավոր Դ.-ն գործն ընդունել է վարույթ և առաջին դատական նիստը նշանակել է 2009 թվականի դեկտեմբերի 7-ին:

20. 2009 թվականի դեկտեմբերի 1-ին դատավոր Դ.-ն Մ. Ս.-ին, Դ. Թ.-ին և Դ. Օ.-ին հրավիրել է դատական նիստին: Դ. Թ.-ին և Դ. Օ.-ին ուղարկված ծանուցագրերը վերադարձվել են դատարան: Դ. Թ.-ին ուղղված նամակում եղել է գրառում, որը կատարվել էր նամակատարի կողմից 2009 թվականի դեկտեմբերի 3-ին, և որի մեջ նշված էր, որ Դ. Թ.-ն գտնվում էր Երևանում, իսկ Դ. Օ.-ին ուղղված նամակը պարունակել է համանման գրառում, որը կատարվել էր 2009 թվականի դեկտեմբերի 4-ին, և որի մեջ նշված էր, որ վերջինս գտնվում էր արտերկրում:

21. Ծանուցվելուց հետո Մ. Ս.-ն դատավոր Դ.-ին գրություն է ուղարկել այն մասին, որ ինքը դեկտեմբերի 4-ից մինչև ամսվա վերջ անձնական գործերով գտնվելու է Երևանում, և չի կարողանա ներկայանալ դատական քննությանը:

22. 2009 թվականի դեկտեմբերի 7-ին դատավոր Դ.-ն Մ. Ս.-ին, Դ. Թ.-ին և Դ. Օ.-ին հրավիրել է դատական նիստին, որը հետաձգվել էր և կայանալու էր 2009 թվականի դեկտեմբերի 17-ին:

23. 2009 թվականի դեկտեմբերի 17-ին դատավոր Դ.-ն որոշում է կայացրել վկաներ Մ. Ս.-ին և Դ. Թ.-ին հետաձգված՝ 2010 թվականի փետրվարի 22-ին կայանալիք դատական նիստին բերման ենթարկելու մասին՝ հաշվի առնելով, որ նրանց չներկայանալու համար հարգելի պատճառներ չէին ներկայացվել: Այդ որոշման կատարումը հանձնարարվել է ոստիկանությանը:

24. Այնուհետև դատավոր Դ.-ն ստացել է Երևանի հիվանդանոցներից մեկի կողմից 2010 թվականի փետրվարի 19-ին տրված տեղեկանքը, որի համաձայն, Դ. Թ.-ն 2010 թվականի փետրվարի 17-ից այնտեղ բուժում էր ստանալու:

25. 2010 թվականի փետրվարի 22-ի գրությամբ ոստիկանությունը դատավոր Դ.-ին տեղեկացրել է, որ Մ. Ս.-ն այլևս չի բնակվում նշված հասցեում, և նրա եղբոր ցուցմունքի համաձայն՝ նա հունվարին մեկնել է Սանկտ Պետերբուրգ, իսկ Դ. Թ.-ն ոստիկանության բաժանմունքում ստորագրությամբ

պարտավորվել է ներկայանալ 2010 թվականի փետրվարի 22-ի դատական նիստին:

26. 2010 թվականի փետրվարի 22-ի նիստը հետաձգվել է մինչև 2010 թվականի մարտի 9-ը, քանի որ դատավոր Դ.-ն հիվանդ է եղել:

27. 2010 թվականի մարտի 9-ի գրությամբ ոստիկանությունը դատավոր Դ.-ին տեղեկացրել է, որ Դ. Թ.-ի մոր տված տեղեկությունների համաձայն՝ նա փետրվարի վերջին գնացել է Երևան՝ բուժում ստանալու նպատակով:

28. 2010 թվականի մարտի 9-ի դատական նիստի ժամանակ դատավոր Դ.-ն որոշել է դիմումատուի վերաբերյալ գործի դատական քննությունն անցկացնել վկաներ Մ. Ա.-ի, Դ. Թ.-ի և Դ. Օ.-ի բացակայությամբ: Այդ դատական նիստի արձանագրության համապատասխան մասերն ունեն հետևյալ բովանդակությունը.

«... Վկաներ Մ. Ա.-ն, Դ. Թ.-ն, Դ. Օ.-ն չեն ներկայացել դատարան՝ դատական նիստին, Կապանի ոստիկանության բաժինը մեզ տեղեկացրել է, որ Մ. Ա.-ն 2010 թվականի հունվարից Կապանում չի բնակվում, նա մեկնել է Սանկտ Պետերբուրգ՝ Ռուսաստանի Դաշնություն, իսկ Դ. Թ.-ն բուժում է ստանում Երևանում:

Դատախազը կարծիք հայտնեց՝

Շարունակել դատական քննությունը, հրապարակել չներկայացած վկաներ Մ. Ա.-ի, Դ. Թ.-ի և Դ. Օ.-ի՝ նախաքննության ժամանակ տված ցուցմունքները:

Պաշտպանը ... կարծիք հայտնեց՝

Շարունակել դատական քննությունը, քանի որ ի պատասխան դատարանի՝ վկաներին բերման ենթարկելու մասին որոշման, Կապանի ոստիկանության բաժինը նշել է, որ նրանք ներկայանալ չեն կարող:

Մեղադրյալը կարծիք հայտնեց՝

Շարունակել դատական քննությունը, թեև իր կինը Մ. Ա.-ին տեսել է 3 օր առաջ:

Լսելով կողմերի կարծիքները՝ դատարանը որոշում է շարունակել դատական քննությունը և հրապարակել չներկայացած վկաներ Մ. Ա.-ի, Դ. Թ.-ի և Դ. Օ.-ի նախաքննական ցուցմունքները:

... մեղադրյալը պատասխանեց.

Նրանք ճիշտը չեն ասել: [Դ. Օ.-ի] խոսքերում որոշ ճշմարտություն կա:

Ես, տորթը բերելուց հետո, ծանրոցների ընդունման սենյակ չեմ մտել:

Սուտ է, որ ես ներարկիչ եմ դրել տորթի մեջ:

Ես ծանրոցների ընդունման սենյակում չեմ եղել և չգիտեմ՝ արդյոք [Դ. Թ.-ն] ստում է, թե՛ ոչ ...»:

29. 2010 թվականի ապրիլի 15-ին Մարզային դատարանը դիմումատուին մեղավոր է ճանաչել նրան առաջադրված մեղադրանքի մեջ և նրան դատապարտել է ազատազրկման՝ հինգ ու կես տարի ժամկետով: Այդ որոշումը կայացնելիս դատարանը, մասնավորապես, նշել է հետևյալը.

«Գնահատելով հետազոտված ապացույցները ... դատարանը հաստատված է համարում այն, որ [դիմումատուն] ապօրինի ձեռք բերելով ... թմրամիջոց, այն տեղադրել է տորթի մեջ և ցանկացել առաքել ... դատապարտյալ [Մ. Խ.-ին], սակայն հանձնուքի ստուգման ժամանակ այն հայտնաբերվել և առգրավվել է ... քրեակատարողական հիմնարկի աշխատակիցների կողմից:

[Դիմումատուն] իրեն մեղավոր չճանաչեց, պնդեց նախաքննության ընթացքում տված ցուցմունքը ... համաձայն որի, ... տորթը, որ բերել են, ինքը արդեն ստորագրել էր [փաստաթղթերը] ... հետո տորթը բերել են ու տվել են [Գ. Բ.-ին]: Ինքը տորթին չի կպել, չի տեսել, չի վերցրել ...

Վկա Գ. Բ.-ի՝ դատաքննության ընթացքում տված ցուցմունքի համաձայն, մի շարք տղաներ, որոնց մեջ ճանաչել է [դիմումատուին], եկել էին դատապարտյալ Մ. Խ.-ին տեսակցության: Տեսակցությունը չի ստացվել, ցանկացել են հանձնուք հանձնել ... Նրանք թողել են հեռացել, քիչ հետո եկել են, հետները բերել են ... տորթ: Տորթի ստուգման ժամանակ տորթի մեջ ... հայտնաբերվել է մեկանգամյա օգտագործման բժշկական ներարկիչ ...

Վկա Ա. Ա.-ի տված ցուցմունքի համաձայն, ինքը աշխատում է ... քրեակատարողական հիմնարկում ... և իրեն հրավիրել են հանձնուքի սենյակ, որտեղ տեսել է տորթի մեջ հայտնաբերված մեկանգամյա օգտագործման ներարկիչ...

... վկա Մ. Ս.-ի նախաքննական ցուցմունքը ... որը նա հաստատել է [դիմումատուի] հետ առերեսման ժամանակ ...

... վկա Դ. Թ.-ի նախաքննական ցուցմունքը ...

... վկա Դ. Օ.-ի նախաքննական ցուցմունքը ...

Նախազգուշացումը, որի համաձայն [դիմումատուն] [Մ. Խ.-ին] հանձնուք է հանձնել և նախազգուշացվել է [օրենքով] արգելված իրեր փոխանցելու համար նախատեսված պատասխանատվության մասին ...

... արգելված իր հայտնաբերելու վերաբերյալ արձանագրության ...

... հայտնաբերված արգելված իրը վերցնելու մասին արձանագրության ...

... դատական փորձագետի եզրակացության ...

Այսպիսով դատարանը հաստատված է համարում [դիմումատուի] կողմից մեղսագրված հանցանքը կատարելը, դրանում նրա մեղավորությունը՝ ապացուցված:

[Դիմումատուի] պատճառաբանությունները ... հիմնավոր չեն և հերքվում են վերևում թվարկված ապացույցներով:»:

30. Դիմումատուն վերաքննիչ բողոք է ներկայացրել՝ դրա մեջ նշելով, *inter alia*, որ իր դեմ ցուցմունք տված վկաները դատարանում չեն հարցաքննվել:

31. 2010 թվականի հունիսի 29-ին Վերաքննիչ քրեական դատարանն անփոփոխ է թողել դիմումատուի վերաբերյալ դատավճիռը: Այդ որոշումը կայացնելիս այն նշել է, որ Մարզային դատարանը դիմումատուի՝ վկաներին դատարանում հարցաքննելու մասին միջնորդությունը պատշաճ կերպով քննել է և դրա հիման վրա որոշում է կայացրել:

32. 2010 թվականի հուլիսի 20-ին դիմումատուն վճռաբեկ բողոք է ներկայացրել՝ բողոքի մեջ նշելով, *inter alia*, որ իր դեմ ցուցմունք տված վկաները չեն քննվել ո՛չ Մարզային դատարանում, ո՛չ էլ Վերաքննիչ դատարանում:

33. 2010 թվականի օգոստոսի 20-ին Վճռաբեկ դատարանը դիմումատուի վճռաբեկ բողոքը հայտարարել է անընդունելի՝ հիմքերի բացակայության պատճառով:

II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Քրեական դատավարության օրենսգիրք (ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ին)

34. 65-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված են քրեական դատավարությունում մեղադրյալի իրավունքները: Մեղադրյալն իրավունք ունի, *inter alia*, ծանոթանալ քննչական և այլ դատավարական գործողությունների արձանագրություններին, որոնց նա մասնակցել կամ ներկա է գտնվել (65-րդ հոդվածի 2-րդ մասի 16-րդ կետ) և նախաքննության ավարտման պահից ծանոթանալ գործի բոլոր նյութերին (65-րդ հոդվածի 2-րդ մասի 17-րդ կետ):

35. 86-րդ հոդվածի (3-րդ և 4-րդ մասեր) համաձայն՝ վկան պարտավոր է ներկայանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով: Վկայի կողմից իր պարտականությունները չկատարելն առաջ է բերում օրենքով նախատեսված պատասխանատվություն:

36. 153-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է, որ վկան կարող է բերման ենթարկվել դատարանի պատճառաբանված որոշման հիման վրա և նշանակված ժամկետում կանչով ներկայանալուն խոչընդոտող հարգելի պատճառների առկայության մասին պարտավոր է տեղյակ պահել իրեն կանչած մարմնին:

37. Դատական քննությանը հրավիրված վկաներից որևէ մեկի չներկայանալու դեպքում դատարանը, լսելով կողմերի կարծիքը, որոշում է կայացնում գործի քննությունը շարունակելու կամ հետաձգելու մասին: Դատական քննությունը կարող է շարունակվել, եթե նշված անձանցից որևէ մեկի չներկայանալը չի խոչընդոտի գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը (332-րդ հոդվածի 1-ին մաս):

38. 342-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հետաքննության, նախաքննության կամ նախորդ դատական քննության ընթացքում վկայի տված ցուցմունքների հրապարակումը, ինչպես նաև նրա ցուցմունքների ձայնագրառման

վերարտադրումը դատական քննության ժամանակ թույլատրվում է, երբ վկան դատական նիստից բացակայում է այնպիսի պատճառներով, որոնք բացառում են նրա դատարան ներկայանալու հնարավորությունը, էական հակասություններ կան այդ ցուցմունքների և դատարանում վկայի տված ցուցմունքների միջև, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում:

39. 426.1 հոդվածի 1-ին մասում նշվում է, որ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայման ենթակա է միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտը: Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով առաջին ատյանի դատարանի դատական ակտը վերանայում է վերաքննիչ դատարանը, իսկ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատական ակտերը՝ վճռաբեկ դատարանը (426.1 հոդվածի 2-րդ մաս):

40. 426.4 հոդվածը, որը վերաբերում է գործերի վերանայմանը, ունի, այնքանով, որքանով վերաբերելի է, հետևյալ բովանդակությունը.

«1. Նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերը վերանայվում են հետևյալ դեպքերում.

...

2) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով կամ որոշմամբ հիմնավորվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը.

...

3. Նոր հանգամանքներով դատական ակտը վերանայելու համար բողոք կարող է բերվել 3 ամսվա ընթացքում այն պահից, երբ բողոք բերող անձն իմացել է կամ կարող էր իմանալ դրանց ի հայտ գալու մասին:

4. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված դեպքում եռամսյա ժամկետի հաշվարկն սկսվում է [տվյալ] միջազգային դատարանի՝ [դիմումատուի վերաբերյալ գործով] ուժի մեջ մտած վճիռը կամ որոշումն այդ դատարանի կանոնակարգերով սահմանած կարգով ... հանձնելու օրվանից:»:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

I. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ ԵՎ 3-ՐԴ ԿԵՏԻ «Դ» ԵՆԹԱԿԵՏԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

41. Դիմումատուն բողոք է ներկայացրել առ այն, որ Մ. Ա.-ի, Դ. Թ.-ի և Դ. Օ.-ի նախաքննական ցուցմունքներն ընդունելը, որոնց նա դատական քննության ժամանակ հարցաքննելու հնարավորություն չի ունեցել, հանգեցրել է արդար դատաքննության իրավունքի խախտման, որը նախատեսված է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով և 3-րդ կետի «դ» ենթակետով, որոնք ունեն հետևյալ բովանդակությունը.

«1. Յուրաքանչյուր ոք, ... նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի ... դատարանի կողմիցարդարացի ... դատաքննության իրավունք:

... ..

3. Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.

դ) հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, և իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու ու հարցաքննելու միևնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները:»:

42. Կառավարությունը վիճարկել է այդ պնդումը:

Ա. Ընդունելիությունը

43. Դատարանը նշում է, որ այս բողոքը, Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի իմաստով, ակնհայտ անհիմն չէ: Դատարանն այնուհետև նշում է, որ այն անընդունելի չէ որևէ այլ հիմքով: Հետևաբար, այն պետք է հայտարարվի ընդունելի:

Բ. Ըստ էության քննությունը

1. Կողմերի փաստարկները

44. Դիմումատուի պնդմամբ՝ ինքը դատապարտվել է միայն վկաներ Մ. Ա.-ի, Դ. Թ.-ի և Դ. Օ.-ի տված ցուցմունքների հիման վրա, որոնցից ոչ մեկը չի ներկայացել դատական քննությանը, թեև չներկայանալու համար հիմնավոր պատճառ չի եղել: Նա վարույթի որևէ փուլում Դ. Թ.-ին և Դ. Օ.-ին հարցաքննելու հնարավորություն չի ունեցել: Թեև իր և Մ. Ա.-ի միջև նախաքննության ընթացքում կատարվել է առերեսում, դրա ժամանակ իր դատավարական իրավունքները չեն պահպանվել: Ամեն դեպքում առերեսումը չէր կարող բավարարել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետի պահանջները, քանի որ ինքը չի կարողացել արդյունավետ կերպով վիճարկել Մ. Ա.-ի տված ցուցմունքները, քանի որ ծանոթ չի եղել դրանց բովանդակությանը՝ հաշվի առնելով, որ պաշտպանության կողմն իրավունք ունի ծանոթանալու գործի նյութերին միայն նախաքննության ավարտից հետո:

45. Կառավարությունը պնդել է, որ Մարզային դատարանը ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ միջոցները՝ վկաներ Մ. Ա.-ի, Դ. Թ.-ի և Դ. Օ.-ի՝ դատական քննության ժամանակ ցուցմունք տալն ապահովելու համար: Մարզային դատարանը բազմիցս հետաձգել է դատական քննությունը և որոշում է կայացրել Մ. Ա.-ին և Դ. Թ.-ին ոստիկանության միջոցով բերման ենթարկելու մասին: Այնուամենայնիվ, չնայած բոլոր ջանքերին, նրանց ներկայանալը հնարավոր չի եղել ապահովել, քանի որ Մ. Ա.-ն և Դ. Օ.-ն գտնվել են արտերկրում, իսկ Դ. Թ.-ն գտնվել է հիվանդանոցում: Կառավարությունը նշել է, որ դիմումատուի դատապարտումը հիմնված է եղել հիմնականում վկաներ Մ. Ա.-ի, Դ. Թ.-ի, Դ. Օ.-ի և քրեակատարողական հիմնարկի երկու աշխատակիցներ Գ. Բ.-ի և Ա. Ա.-ի տված ցուցմունքների վրա: Եվ եթե առաջին երեք վկաները հիմնավոր պատճառով չեն ներկայացել դիմումատուի վերաբերյալ գործով դատական քննությանը, մյուս երկուսը ցուցմունք են տվել անմիջապես առաջին ատյանի

դատարանում: Ավելին, դիմումատուի և Մ. Ս.-ի միջև կատարվել է առերեսում՝ դիմումատուի փաստաբանի ներկայությամբ:

2. Դատարանի գնահատականը

ա) Ընդհանուր սկզբունքները

46. Դատարանը կրկին նշում է, որ 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետով սահմանված երաշխիքներն այդ դրույթի 1-ին կետով սահմանված՝ արդար դատաքննության իրավունքի հատուկ ասպեկտներ են (տե՛ս *Ալ-Խավաջան և Թահերին ընդդեմ Միացյալ Թագավորության [ՄԴ] [Al-Khawaja and Tahery v. the United Kingdom [GC]]*, թիվ 26766/05 և 22228/06, § 118, ՄԻԵԴ 2011), հետևաբար, այն դիմումատուի բողոքը կքննի՝ հիմք ընդունելով այդ երկու դրույթները՝ դրանք դիտարկելով համատեղ (տե՛ս *Վինդիշն ընդդեմ Ավստրիայի [Windisch v. Austria]*, 1990 թվականի սեպտեմբերի 27, § 23, շարք Ա թիվ 186):

47. Դատարանն այնուհետև նշում է, որ բոլոր ապացույցները սովորաբար պետք է ներկայացվեն դռնբաց դատական քննության ժամանակ մեղադրյալի ներկայությամբ՝ մրցակցային դատավարության սկզբունքի պահպանմամբ փաստարկներ ներկայացնելու հնարավորությունն ապահովելու համար: Այս սկզբունքից բացառություններ կան, սակայն դրանք չպետք է խախտեն պաշտպանության կողմի իրավունքները. որպես կանոն, 6-րդ հոդվածի 1-ին կետով և 3-րդ կետի «դ» ենթակետով պահանջվում է, որ ամբաստանյալին համարժեք և պատշաճ հնարավորություն տրվի վկայի՝ իր դեմ տված ցուցմունքը վիճարկելու կամ իր դեմ ցուցմունք տված վկային հարցաքննելու՝ վկայի կողմից ցուցմունք տալու ժամանակ կամ հետագա փուլերում (տե՛ս *Խոդորկովսկին և Լեբեդևն ընդդեմ Ռուսաստանի [Khodorkovskiy and Lebedev v. Russia]*, թիվ 11082/06 և 13772/05, § 707, 2013 թվականի հուլիսի 25):

48. Վերևում հիշատակված *Ալ-Խավաջայի և Թահերիի* գործի 119-147-րդ պարբերություններում Մեծ պալատը հստակեցրել է այն սկզբունքները, որոնք

պետք է կիրառվեն այն դեպքում, երբ վկան դռնբաց դատական քննությանը չի ներկայանում: Այդ սկզբունքները կարող են ամփոփ ներկայացվել հետևյալ կերպ՝

i) Դատարանը նախապատրաստական փուլում նախ պետք է քննի այն հարցը, թե արդյոք հիմնավոր պատճառ կա չներկայացած վկայի տված ցուցմունքը որպես ապացույց ճանաչելու համար՝ հաշվի առնելով, որ վկաները պետք է, որպես կանոն, ցուցմունք տան դատական քննության ժամանակ, և որ պետք է ձեռնարկվեն բոլոր անհրաժեշտ միջոցները՝ նրանց ներկայանալն ապահովելու համար.

ii) չներկայանալու ամենահաճախ հանդիպող պատճառներն են, օրինակ, ինչպես *Ալ-Խավաջայի և Թահերիի* գործում (վերևում հիշատակված), վկայի մահը կամ վախը վրեժխնդրությունից: Այնուամենայնիվ, վկան դատական քննությանը կարող է չներկայանալ նաև այլ օրինական պատճառներով.

iii) այն դեպքում, երբ վկան չի հարցաքննվել վարույթի նախորդ որևէ փուլում, դատական քննության ժամանակ դատարանում ցուցմունք տալու փոխարեն վկայի՝ նախկինում տված գրավոր ցուցմունքը որպես ապացույց ճանաչելը պետք է ծայրահեղ միջոց լինի.

iv) չներկայացած վկաների՝ նախկինում տված գրավոր ցուցմունքները որպես ապացույց ճանաչելն անբարենպաստ հետևանքներ է առաջացնում ամբաստանյալի համար, որը, ըստ էության, քրեական դատավարության ընթացքում պետք է իր դեմ ներկայացված ապացույցները վիճարկելու արդյունավետ հնարավորություն ունենա: Մասնավորապես, նա պետք է կարողանա ստուգել վկայի ներկայացրած ապացույցների ճշմարտացիությունը և հավաստիությունը՝ դրանք վկայի ներկայությամբ բանավոր քննելու միջոցով՝ վկայի կողմից ցուցմունք տալու ժամանակ կամ վարույթի հետագա փուլերում.

v) «միակ կամ վճռորոշ ցուցմունքի սկզբունքի» համաձայն՝ այն դեպքում, երբ ամբաստանյալը դատապարտվում է բացառապես կամ հիմնականում այն վկաների տված ցուցմունքների հիման վրա, որոնց մեղադրյալը չի կարող

հարցաքննել վարույթի փուլերից որևէ մեկում, նրա պաշտպանության իրավունքներն անհիմն կերպով սահմանափակվում են.

vi) այս համատեքստում «վճռորոշ» բառը պետք է հասկանալ միայն այնպիսի նշանակության կամ կարևորության ցուցմունք, որը կարող է որոշիչ լինել գործի ելքի համար: Եթե վկայի չստուգված ցուցմունքը հիմնավորվում է այլ հաստատված ապացույցներով, ապա դրա վճռորոշ լինելու հանգամանքը գնահատելը կախված կլինի հիմնավորող ապացույցների նշանակությունից. որքան հավաստի են մեղավորությունը հաստատող մյուս ապացույցները, այնքան քիչ հավանական է, որ չներկայացած վկայի ցուցմունքը վճռորոշ կհամարվի.

vii) այնուամենայնիվ, քանի որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետը պետք է մեկնաբանվի դատաքննության արդարացիության ընդհանուր ուսումնասիրության համատեքստում, միակ կամ վճռորոշ ցուցմունքի սկզբունքը չպետք է կիրառվի ոչ ճկուն եղանակով.

viii) մասնավորապես, եթե ուրիշի խոսքի վրա հիմնված ցուցմունքը միակ կամ վճռորոշ ապացույցն է ամբաստանյալի դեմ, ապա այն որպես ապացույց ճանաչելն ինքնըստինքյան չի հանգեցնի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտման: Միևնույն ժամանակ, եթե դատապարտման համար միակ կամ վճռորոշ հիմք են հանդիսանում չներկայացած վկաների ցուցմունքները, ապա Դատարանը պետք է դատական քննությունը հանգամանորեն ուսումնասիրի: Պայմանավորված այն վտանգներով, որոնք կարող են առաջանալ այդպիսի ցուցմունքները որպես ապացույց ճանաչելու հետևանքով, այն շատ կարևոր գործոն կհանդիսանա հավասարակշռությունն ապահովելու հարցում, և դրա համար անհրաժեշտ կլինեն բավարար հակակշռող գործոններ, այդ թվում՝ հուսալի ընթացակարգային երաշխիքներ: Յուրաքանչյուր դեպքում հարցն այն է, թե արդյոք առկա են բավարար հակակշռող գործոններ, այդ թվում՝ միջոցներ, որոնք թույլ կտան արդարացի և պատշաճ ձևով գնահատել այդ ցուցմունքների հավաստիությունը՝ դրանք որպես ապացույց ճանաչելու համար: Սա թույլ կտա, որ անձը դատապարտվի այդպիսի ցուցմունքների հիման վրա միայն այն դեպքում, եթե

դրանք բավականաչափ հավաստի լինեն՝ հաշվի առնելով գործի համար դրանց կարևորությունը:

49. Այս սկզբունքները մանրամասնորեն պարզաբանվել են *Շաչաշվիլիի* գործում (տե՛ս *Շաչաշվիլին ընդդեմ Գերմանիայի* [ՄՊ] [*Schtschaschwili v. Germany* [GC]], թիվ 9154/10, §§ 111-131, ՄԻԵԴ 2015), որում Մեծ պալատը հաստատեց, որ վկայի չներկայանալու համար հիմնավոր պատճառի բացակայությունը չի կարող ինքնին վկայել դատաքննության արդարացի չլինելու մասին, թեև ընդհանուր արդարացիությունը գնահատելիս այն ամեն դեպքում կարևոր գործոն է հավասարակշռությունը որոշելու համար և կարող է որոշիչ դեր ունենալ 6-րդ հոդվածի 1-ին կետի և 3-րդ կետի «դ» ենթակետի խախտում արձանագրելու հարցում: Ավելին, հաշվի առնելով, որ Դատարանի խնդիրն է պարզել՝ արդյոք դատաքննությունն ընդհանուր առմամբ արդարացի է եղել, այն պետք է ուսումնասիրի ոչ միայն բավարար հակակշռող գործոնների առկայությունն այն գործերում, որոնցում չներկայացած վկայի ցուցմունքը միակ կամ վճռորոշ հիմքն է հանդիսացել դիմումատուին դատապարտելու համար, ինչպես նաև այն գործերում, որոնցում այն չի կարողացել հստակ պարզել՝ արդյոք խնդրո առարկա ցուցմունքը միակը և վճռորոշն է եղել, սակայն, այնուհանդերձ, համոզվել է, որ այն կարևոր նշանակություն է ունեցել, և այն որպես ապացույց ճանաչելը, հնարավոր է, սահմանափակել է պաշտպանության կողմի հնարավորությունները: Հակակշռող գործոնների՝ դատաքննությունն արդար համարելու համար անհրաժեշտ շրջանակը կախված է չներկայացած վկայի ցուցմունքի նշանակությունից: Որքան կարևոր նշանակություն ունենա այդ ցուցմունքը, այնքան ավելի կարևոր նշանակություն պետք է ունենան հակակշռող գործոնները, որպեսզի դատաքննությունն ընդհանուր առմամբ համարվի արդարացի (տե՛ս *Սեթոնն ընդդեմ Միացյալ Թագավորության* [*Seton v. the United Kingdom*], թիվ 55287/10, §§ 58 և 59, 2016 թվականի մարտի 31):

բ) Այդ սկզբունքների կիրառումը սույն գործի նկատմամբ

ի) Արդյոք վկաների՝ դատական քննությանը չներկայանալու համար եղել են հիմնավոր պատճառներ

50. Առաջնային հարցը, որը Դատարանը պետք է քննի, այն է, թե արդյոք հիմնավոր պատճառներ են եղել վկաներ Մ. Ս.-ի, Դ. Թ.-ի և Դ. Օ.-ի նախաքննական ցուցմունքները որպես ապացույց ճանաչելու համար՝ առանց դիմումատուի վերաբերյալ գործով դատական քննության ժամանակ նրանց հարցաքննելու:

51. Դատարանը սովորաբար կոշտ մոտեցում է ցուցաբերում, երբ պետք է որոշի՝ արդյոք ներպետական դատարանը բավարար փաստական կամ իրավական հիմքեր է ունեցել՝ վկայի՝ դատական քննությանը ներկայանալը չապահովելու համար: Օրինակ, այն գտել է, որ վկայի բացակայությունն այն երկրից, որտեղ իրականացվում է վարույթը, ինքնին հիմնավոր պատճառ չէ՝ դատական քննությունից նրա բացակայությունն արդարացնելու համար (տե՛ս *Սեթոնի* գործը, վերևում հիշատակված, § 61): Մասնավորապես, ըստ Դատարանի՝ եթե վկայի գտնվելու վայրը պարզել հնարավոր չէ, ապա մարմինները պետք է «ակտիվորեն փնտրեն վկային» և ձեռնարկեն «բոլոր հնարավոր միջոցները՝ վկայի ներկայությունն ապահովելու համար» (տե՛ս *Լուչիչն ընդդեմ Խորվաթիայի [Lučić v. Croatia]*, թիվ 5699/11, § 79, 2014 թվականի փետրվարի 27):

52. Ինչ վերաբերում է սույն գործին, ապա Դատարանը նշում է, որ վկաների ներկայանալը չապահովելու համար ներկայացված պատճառաբանությունը, որի վրա հիմնվել է առաջին ատյանի դատարանի դատավորը, և որն այնուհետև ընդունվել է նաև Վերաքննիչ քրեական դատարանի կողմից, այն է, որ Մ. Ս.-ն և Դ. Օ.-ն գտնվել են արտերկրում, իսկ Դ. Թ.-ն բուժում է ստացել մայրաքաղաքում (տե՛ս վերևում՝ 28-րդ և 31-րդ պարբերությունները):

53. Հաշվի առնելով Դատարանի որդեգրած խիստ մոտեցումը նախորդ գործերով՝ Դատարանը չի կարծում, որ բոլոր հնարավոր միջոցները ձեռնարկվել են՝ տվյալ վկաների ներկայանալն ապահովելու համար: Ճիշտ է, որ առաջին ատյանի դատարանը որոշում է կայացրել վկաներ Մ. Ս.-ին և Դ. Թ.-ին ոստիկանության աջակցությամբ բերման ենթարկելու մասին: Այս միջոցը, այնուամենայնիվ, որևէ արդյունք չի տվել (տե՛ս վերևում՝ 23-րդ, 25-րդ և 27-րդ պարբերությունները): Այդպիսի պայմաններում առաջին ատյանի դատարանը կարող էր դիմել միջազգային իրավական օգնությանը՝ ապահովելու համար վկաներ Մ. Ս.-ի և Դ. Օ.-ի ներկայանալը, որոնք ենթադրաբար բացակայում էին երկրից: Ավելին, առաջին ատյանի դատարանը նույնիսկ չի փորձել պարզել, թե Դ. Թ.-ն երբ է դուրս գրվելու հիվանդանոցից, որպեսզի կարողանա ներկայանալ դատական քննությանը: Առաջին ատյանի դատարանը հեշտությամբ ընդունել է վկաների բացակայության համար ոստիկանության կողմից տրված պատճառաբանությունները (տե՛ս վերևում՝ 28-րդ պարբերությունը), որոնք, ընդ որում, հիմնված են եղել ոչ թե ոստիկանության՝ վկաների գտնվելու վայրը պարզելուն ուղղված գործողությունների, այլ այդ վկաների բարեկամների տված ցուցմունքների վրա (տե՛ս վերևում՝ 25-րդ և 27-րդ պարբերությունները):

54. Սակայն հարցը միայն վկաների՝ դիմումատուի վերաբերյալ գործով դատական քննությանը չներկայանալու համար հիմնավոր պատճառի բացակայությունը չէ: Միայն այս հանգամանքն ինքնին չի վկայում քրեական դատավարության արդարացի չլինելու մասին, թեև այն շատ կարևոր գործոն է մյուս համապատասխան հանգամանքների հետ ընդհանուր հավասարակշռությունը որոշելու համար (տե՛ս *Շաչաշվիլի* գործը, վերևում հիշատակված, § 113):

ii) Արդյոք չներկայացած վկայի ցուցմունքը «միակը և վճռորոշն է» եղել

55. Ինչ վերաբերում է *Ալ-Խավաջայի* գործով ստուգման երկրորդ փուլին, այսինքն՝ այն հարցին, թե արդյոք չներկայացած այն վկայի ցուցմունքը, որի ցուցմունքները որպես ապացույց են ճանաչվել, միակ կամ վճռական հիմքն է

հանդիսացել ամբաստանյալին դատապարտելու համար, ապա Դատարանը կրկնում է, որ որպես «միակ» ցուցմունք պետք է հասկանալ մեղադրյալի դեմ ներկայացված միակ ցուցմունքը (տե՛ս *Ալ-Խավաջայի և Թահերիի* գործը, վերևում հիշատակված, § 131): «Վճռորոշ» ցուցմունքը պետք է մեկնաբանվի նեղ իմաստով՝ որպես այնպիսի նշանակության կամ կարևորության ցուցմունք, որը կարող է որոշիչ լինել գործի ելքի համար: Եթե վկայի չստուգված ցուցմունքը հիմնավորվում է այլ հաստատված ապացույցներով, ապա դրա վճռորոշ լինելու հանգամանքը գնահատելը կախված կլինի հիմնավորող ապացույցների նշանակությունից. որքան հավաստի են մեղավորությունը հաստատող մյուս ապացույցները, այնքան քիչ հավանական է, որ չներկայացած վկայի ցուցմունքը կհամարվի վճռորոշ (նույն տեղում, § 131):

56. Դատարանը նշում է, որ ներպետական դատարանների վճիռներում վկաներ Մ. Ս.-ի, Դ. Թ.-ի և Դ. Օ.-ի ցուցմունքները նշվել են որպես դիմումատուի մեղավորությունը հիմնավորող ապացույցներ՝ առանց այդ ապացույցների հավաստիությունը գնահատելու, որը կօգներ Դատարանին որոշել՝ արդյոք դիմումատուի դատապարտումը հիմնված է եղել միայն վկաների՝ նախաքննության ընթացքում տված ցուցմունքների վրա կամ արդյոք դրա համար այդ ցուցմունքները վճռորոշ են եղել (տե՛ս վերևում՝ 29-րդ և 31-րդ պարբերությունները): Այդ պատճառով Դատարանը պետք է ինքը գնահատի չներկայացած վկաների կողմից տրված ցուցմունքների նշանակությունը՝ մեղավորությունը հաստատող առկա լրացուցիչ ապացույցները հաշվի առնելով (տե՛ս *Շաչաշվիլիի* գործը, վերևում հիշատակված, § 143, *Պոլետանը և Ազիրովիկն ընդդեմ Մակեդոնիայի նախկին Հարավսլավական Հանրապետության [Poletan and Azirovik v. the former Yugoslav Republic of Macedonia]*, թիվ 26711/07, 32786/10 և 34278/10, § 88, 2016 թվականի մայիսի 12):

57. Դատարանն այս առնչությամբ նշում է, որ դիմումատուի մեղավորությունը հաստատվել է հետևյալ ապացույցների հիման վրա. քրեակատարողական հիմնարկի աշխատակիցներ Գ. Բ.-ի և Ա. Ա.-ի դատական

քննության ժամանակ տված ցուցմունքները, վկաներ Մ. Ս.-ի, Դ. Թ.-ի և Դ. Օ.-ի նախաքննական ցուցմունքները, այն փաստը, որ համապատասխան փաստաթղթերը, որպես ծանրոցն ուղարկող, ստորագրել է դիմումատուն և նրան զգուշացվել է բանտարկյալին անօրինական իրեր ուղարկելու արգելքի մասին, տորթի մեջ գտնված իրերի հայտնաբերման և առգրավման մասին արձանագրությունը և դատական փորձագետի եզրակացությունը, որի համաձայն հայտնաբերված նյութերը եղել են թմրամիջոցներ (տե՛ս վերևում՝ 29-րդ պարբերությունը):

58. Հաշվի առնելով այս ապացույցները՝ Դատարանը չի կարող չնշել, որ վկաներ Մ. Ս.-ի, Դ. Թ.-ի և Դ. Օ.-ի ցուցմունքները միակ ապացույցներն են եղել, որոնցով հաստատվել է, որ տորթի մեջ թմրամիջոցները դրել է դիմումատուն: Մ. Ս.-ն ուղղակիորեն մեղադրել է դիմումատուին՝ նշելով, որ տեսել է, թե ինչպես է նա ներարկիչը դնում տորթի մեջ, մինչդեռ Դ. Թ.-ն և Դ. Օ.-ն նշել են, որ իրենք տորթը տվել են դիմումատուին՝ մինչև այն վարչակազմին փոխանցելը (տե՛ս վերևում՝ 15-րդ պարբերությունը): Ամեն դեպքում չներկայացած բոլոր երեք վկաների ցուցմունքներով հերքվում է դիմումատուի առարկությունն այն մասին, որ նա ձեռք չի տվել տորթին՝ մինչև այն քրեակատարողական հիմնարկի վարչակազմին փոխանցելը: Առկա մյուս ապացույցները, այդ թվում՝ քրեակատարողական հիմնարկի երկու աշխատակիցներ Գ. Բ.-ի և Ա. Ա.-ի ցուցմունքները, երկրորդական և ոչ կարևոր բնույթ են կրում, իսկ մյուս ապացույցները բավարար չեն՝ դիմումատուի կողմից հանցագործությունը կատարելու փաստը հաստատելու համար: Վերոնշյալը հաշվի առնելով՝ Դատարանը կարծում է, որ չներկայացած վկաների ցուցմունքները դիմումատուի դատապարտման համար վճռորոշ են եղել:

iii) Արդյո՞ք եղել են բավարար «հակակշռող գործոններ»

59. Ի վերջո, Դատարանը պետք է որոշի՝ արդյոք եղել են բավարար հակակշռող գործոններ, այդ թվում՝ միջոցներ, որոնք թույլ են տվել արդարացիորեն և պատշաճ կերպով գնահատել չներկայացած վկաների տված

ցուցմունքների հավաստիությունը: Այս համատեքստում կարևոր է հետևյալը՝ առաջին ատյանի մոտեցումը չստուգված ցուցմունքների նկատմամբ, մեղավորությունը հաստատող այլ ապացույցների առկայությունն ու դրանց հավաստիությունը և դատավարական գործողությունները, որոնք ձեռնարկվել են դատական քննության ժամանակ վկաներին խաչաձև հարցաքննելու հնարավորության բացակայությունը լրացնելու համար (տե՛ս *Շաչաշվիլի* գործը, վերևում հիշատակված, §§ 125-131):

60. Դատարանը վերստին նշում է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի ո՛չ բառացի, և ո՛չ էլ իմաստային մեկնաբանությունը չեն արգելում անձին իր կամքով, ուղղակի կամ անուղղակի կերպով հրաժարվել արդար դատաքննության երաշխիքներ ունենալու իրավունքից: Այնուամենայնիվ, այդպիսի հրաժարումը պետք է, եթե այն կնպաստի Կոնվենցիայի նպատակներին, ընդունվի անվերապահորեն, այն չպետք է հակասի հանրության կարևոր շահերին և պետք է ունենա իր կարևորությանը համապատասխան նվազագույն երաշխիքները (տե՛ս *Դվորսկին ընդդեմ Խորվաթիայի* [ՄԴ] [*Dvorski v. Croatia* [GC]], թիվ 25703/11, § 100, ՄԻԵԴ 2015 և դրանում հիշատակված գործերը):

61. Դատարանը նշում է, որ 2010 թվականի մարտի 9-ի դատական նիստի ժամանակ դիմումատուի փաստաբանը համաձայնվել է շարունակել դատական քննությունը՝ հաշվի առնելով ոստիկանության նամակն այն մասին, որ վկաների ներկայանալն ապահովել հնարավոր չէ: Ավելին, դիմումատուն ինքը նշել է, որ համաձայն է, որ դատական քննությունը շարունակվի, սակայն նշել է, որ իր կինը դատական նիստից երեք օր առաջ տեսել է Մ. Ս.-ին՝ դրանով իսկ վիճարկելով Մ. Ս.-ի՝ քաղաքից բացակայելու մասին տեղեկությունը (տե՛ս վերևում՝ 28-րդ պարբերությունը): Այս առնչությամբ տվյալ գործը տարբերվում է Դատարանի կողմից քննված մյուս գործերից, որոնց դեպքում քրեական գործով ամբաստանյալը հրաժարվել էր խաչաձև հարցաքննել իր դեմ ցուցմունք տված վկաներին (տե՛ս մասնավորապես՝ *Բեն Մումենն ընդդեմ Իտալիայի* [*Ben Moumen v. Italy*], թիվ 3977/13, § 60, 2016 թվականի հունիսի 23 և *Պոլեպանի և Ազիրովիկի*

գործը, վերևում հիշատակված, § 87): Այս հանգամանքներում չի կարելի ասել, որ համաձայնվելով շարունակել դատական քննությունը՝ դիմումատուն անվերապահորեն՝ անուղղակի կամ ուղղակի կերպով հրաժարվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված՝ իր դեմ ցուցմունք տված վկաներին հարցաքննելու իրավունքներից: Ընդհակառակը, առաջին ատյանի դատարանի և ոստիկանության կողմից տվյալ վկաների ներկայանալը բազմիցս չապահովելու արդյունքում այլընտրանք չունենալով՝ դիմումատուն համաձայնվել է շարունակել դատական քննությունը նրանց բացակայության պայմաններում և այդ հարցը բարձրացրել է իր հետագա բողոքներում:

62. Վերոնշյալը հաշվի առնելով՝ Դատարանը գտնում է, որ այն, որ դիմումատուն համաձայնվել է դատական քննությունը շարունակել տվյալ վկաների բացակայության պայմաններում, չի նշանակում, որ նա հրաժարվել է իր դեմ ցուցմունք տված վկաներին հարցաքննելու իրավունքից:

63. Ինչ վերաբերում է ներպետական դատարաններ չներկայացած վկաներ Մ. Ս.-ի, Դ. Թ.-ի և Դ. Օ.-ի ցուցմունքները որպես ապացույց ճանաչելուն, ապա Դատարանը նշում է, որ Մարզային դատարանը այդ ցուցմունքները հաշվի առնելիս շրջահայացություն չի ցուցաբերել: Մարզային դատարանի դատավճիռը չի պարունակում որևէ նշում այն մասին, որ այն տեղյակ է եղել վկաների չստուգված ցուցմունքի սահմանափակ ապացուցողական նշանակության մասին: Ընդհակառակը, վկաների չստուգված ցուցմունքները դասվել են դիմումատուի մեղավորությունը հիմնավորող ապացույցներին՝ առանց դրանց հավաստիությունը գնահատելու (տե՛ս վերևում՝ 29-րդ պարբերությունը): Այդ պատճառով Դատարանը կարծում է, որ Մարզային դատարանը պատշաճ կերպով չի քննել չներկայացած վկաների ցուցմունքների հավաստիությունը:

64. Դատարանը նաև նշում է, որ Մարզային դատարանը, ինչպես նշվել է վերևում (տե՛ս 57-րդ և 49-րդ պարբերությունները), չի ունեցել մեղավորությունը հաստատող լրացուցիչ ապացույցներ, որոնք կհաստատեին Մ. Ս.-ի, Դ. Թ.-ի և Դ. Օ.-ի տված ցուցմունքները:

65. Ինչ վերաբերում է դատավարական այն գործողություններին, որոնք ձեռնարկվել են՝ դատական քննության ժամանակ վկաներին խաչաձև հարցաքննելու հնարավորության բացակայությունը լրացնելու համար, ապա Դատարանը նշում է, որ նախաքննության ընթացքում դիմումատուի և վկա Մ. Ս.-ի միջև կատարվել է առերեսում (տե՛ս վերևում՝ 16-րդ պարբերությունը): Թեև Մ. Ս.-ն կարող է համարվել մեղադրանքի կողմի հիմնական վկան՝ հաշվի առնելով, որ նա ուղղակիորեն մեղադրել է դիմումատուին, Դ. Թ.-ի և Դ. Օ.-ի ցուցմունքները Մարզային դատարանի համար հավասար հիմք են ծառայել հանցագործությունը կատարելու մեջ դիմումատուի մեղավորությունը հաստատված համարելու համար, և Մ. Ս.-ի ցուցմունքին հատուկ նշանակություն չի տրվել (տե՛ս վերևում՝ 29-րդ պարբերությունը): Դատարանը նաև նշում է, որ դիմումատուին նախաքննության փուլում վկաներ Դ. Թ.-ին և Դ. Օ.-ին հարցաքննելու որևէ հնարավորություն չի տրվել:

66. Դիմումատուն պնդել է, որ ծանոթ չլինելով Մ. Ս.-ի՝ նախկինում տված ցուցմունքներին, նա չի կարողացել վիճարկել դրանց հավաստիությունն առերեսման ժամանակ: Դատարանը, այնուամենայնիվ, նշում է, որ Մ. Ս.-ն ամեն դեպքում պնդել է իր ցուցմունքներն առերեսման ժամանակ (տե՛ս վերևում՝ 16-րդ պարբերությունը), և դիմումատուն ծանոթացել է դեպքերի՝ Մ. Ս.-ի մեկնաբանմանը, հետևաբար նա [դիմումատուն] ունեցել է նրան հարցեր ուղղելու հնարավորություն: Դատարանը մյուս կողմից նշում է, որ դիմումատուն բողոքում անդրադարձել է նաև առերեսումն անցկացնելու եղանակին՝ պնդելով, որ իր հարցերից մի քանիսը պատշաճ կերպով չեն արձանագրվել, իսկ բողոքները մնացել են անպատասխան (տե՛ս վերևում՝ 17-րդ պարբերությունը): Դատարանը նաև նշում է, որ առաջին ատյանի դատարանն իր վճռի մեջ միայն նշել է, որ Մ. Ս.-ն առերեսման ժամանակ հաստատել է նախկինում տված իր ցուցմունքները, սակայն իր գնահատականը չի տվել դիմումատուի և Մ. Ս.-ի միջև առերեսման արդյունքների վերաբերյալ՝ Մ. Ս.-ի ցուցմունքների հավաստիությունը գնահատելու համար (տե՛ս վերևում՝ 29-րդ պարբերությունը):

67. Այդպիսի հանգամանքներում Դատարանը կարծում է, որ չներկայացած երեք վկաներից միայն մեկի հետ կատարված առերեսումը, որը նաև չի ազդել նրանց վկայությունների գնահատման վրա, բավարար չի եղել՝ դատական քննության ժամանակ վկաներին խաչաձև հարցաքննելու հնարավորության բացակայությունը լրացնելու համար:

68. Հաշվի առնելով չներկայացած վկաների չներկայանալու համար հիմնավոր պատճառի բացակայությունը, մեղավորությունը հաստատող լրացուցիչ ապացույցների բացակայությունը և դիմումատուի վերաբերյալ գործի դատական քննության ժամանակ վկաներ Մ. Ա.-ի, Դ. Թ.-ի և Դ. Օ.-ի բացակայությանը հակակշռող ընթացակարգային երաշխիքների անբավարարությունը՝ Դատարանը կարծում է, որ քրեական գործով վարույթն ընդհանուր առմամբ անարդարացի է եղել այն պատճառով, որ այդ չներկայացած վկաների նախաքննական ցուցմունքները ճանաչվել են որպես ապացույց:

69. Հետևաբար, տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին կետի և 3-րդ կետի «դ» ենթակետի խախտում:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

70. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն՝

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել:»:

Ա. Վնասը

71. Դիմումատուն պահանջել է 4 000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում:

72. Կառավարությունը նշել է, որ դիմումատուի պահանջը չափազանցված է:

73. Դատարանը, կատարելով իր գնահատումն արդարության սկզբունքի հիման վրա և հաշվի առնելով գործի հանգամանքները, դիմումատուին շնորհում է 2 400 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում:

74. Դատարանը, մյուս կողմից, անհրաժեշտ է համարում նշել, որ վճիռը, որով այն Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում է արձանագրում, պատասխանող Պետության վրա իրավական պարտավորություն է դնում ոչ միայն շահագրգիռ անձանց վճարել արդարացի փոխհատուցման կարգով տրամադրվելիք գումարները, եթե այդպիսիք կան, այլ նաև Նախարարների կոմիտեի վերահսկողությամբ ընտրել ընդհանուր և (կամ), անհրաժեշտության դեպքում, անհատական բնույթի միջոցներ, որոնք անհրաժեշտ է ձեռնարկել ներպետական իրավական համակարգում՝ Դատարանի կողմից արձանագրված խախտմանը վերջ դնելու և դրա հետևանքների համար այնպիսի հատուցում տրամադրելու համար, որ հնարավորինս վերականգնվի խախտումից առաջ առկա իրավիճակը (տե՛ս *Սկոզարին և Ջունտան ընդդեմ Իտալիայի* [ՄՊ] [*Scozzari and Giunta v. Italy* [GC]], թիվ 39221/98 և 41963/98, § 249, ՄԻԵԴ 2000-VIII, *Իլաշկուն և այլք ընդդեմ Մոլդովայի և Ռուսաստանի* [ՄՊ] [*Ilaşcu and Others v. Moldova and Russia* [GC]], թիվ 48787/99, § 487, ՄԻԵԴ 2004-VII, և *Լունգոկին ընդդեմ Ռումինիայի* [*Lungoci v. Romania*], թիվ 62710/00, § 55, 2006 թվականի հունվարի 26): Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում արձանագրելու դեպքում դիմումատուի համար պետք է հնարավորինս վերականգնվի այն իրավիճակը, որում նա կգտնվեր, եթե սույն դրույթի պահանջները չանտեսվեին (տե՛ս, *mutatis mutandis* (համապատասխան փոփոխություններով), *Սեյդովիչն ընդդեմ Իտալիայի* [ՄՊ] [*Sejdovic v. Italy* [GC]], թիվ 56581/00, § 127, ՄԻԵԴ 2006-II, և *Յանակիևն ընդդեմ Բուլղարիայի* [*Yanakiiev v. Bulgaria*], թիվ 40476/98, § 89, 2006 թվականի օգոստոսի 10):

75. Դատարանն այս առնչությամբ նշում է, որ Քրեական դատավարության օրենսգրքի 426.1 և 426.4 հոդվածներով նախատեսվում է ներպետական

դատական ակտը վերանայելու հնարավորություն, եթե Դատարանն արձանագրել է Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում (տե՛ս վերևում՝ 39-րդ և 40-րդ պարբերությունները): Ինչպես Դատարանը վճռել է նախորդ նման գործերում, հատուցման ամենապատշաճ ձևը, որպես կանոն, կլինի պատշաճ կարգով գործի վերանայումը՝ արդար դատաքննության բոլոր պահանջներին համապատասխան (տե՛ս *Գաբրիելյանն ընդդեմ Հայաստանի [Gabrielyan v. Armenia]*, թիվ 8088/05, § 104, 2012 թվականի ապրիլի 10):

Բ. Ծախսերը և ծախքերը

76. Դիմումատուն նաև պահանջել է 500 եվրո՝ որպես դատական ծախսերի հատուցում: Դիմումատուն ներկայացրել է իր մոր և պրն Ալումյանի՝ դատարանում իր ներկայացուցչի միջև կնքված՝ իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր՝ իր պահանջները հիմնավորելու համար:

77. Կառավարությունը պնդել է, որ դատական ծախսերը, որոնց համար հատուցում էր պահանջվում, իրականում չէին կատարվել դիմումատուի կողմից, քանի որ փաստաբանին վարձել և վճարել էր նրա մայրը:

78. Դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ դիմումատուն ունի ծախսերի ու ծախքերի հատուցման իրավունք այնքանով, որքանով ապացուցվել է, որ նա դրանք իրականում և ըստ անհրաժեշտության կրել է, և որ դրանց չափը եղել է ողջամիտ: Սույն գործի պարագայում հաշվի առնելով իր տնօրինման տակ գտնվող փաստաթղթերը և վերոնշյալ չափորոշիչները, ինչպես նաև այն փաստը, որ իրավաբանական ծառայությունների մատուցման՝ ներկայացված պայմանագիրը հստակ ցույց է տալիս, որ այն ուղղակիորեն կապված է սույն գանգատի հետ՝ Դատարանը ողջամիտ է համարում շնորհել 500 եվրո՝ Դատարանում կրած դատական ծախսերի համար:

Գ. Չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը

79. Դատարանը գտնում է, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է հիմնված լինի Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ փոխառության առավելագույն տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք տոկոսային միավոր:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱԶԱՅՆ՝

1. Հայտարարում է գանգատն ընդունելի.
2. Վճռում է, որ տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետի հետ համատեղ՝ դիմումատուի՝ իր դեմ ցուցմունք տված վկաներին հարցաքննելու հնարավորությունից զրկվելու առումով.
3. Վճռում է, որ
 - ա) պատասխանող Պետությունը, Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան վճիռը վերջնական դառնալու օրվանից՝ երեք ամսվա ընթացքում, պետք է դիմումատուին վճարի հետևյալ գումարները, որոնք պետք է փոխարկվեն Հայաստանի Հանրապետության արժույթով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով.
 - i) ոչ նյութական վնասի դիմաց՝ 2 400 եվրո (երկու հազար չորս հարյուր եվրո)՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ,
 - ii) ծախսերի և ծախքերի դիմաց՝ 500 եվրո (հինգ հարյուր եվրո)՝ գումարած դիմումատուին վճարվող գումարից գանձման ենթակա ցանկացած հարկ.
 - բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո՝ մինչև վճարման օրը, պետք է հաշվարկվի վերոնշյալ գումարների նկատմամբ պարզ տոկոսադրույք՝ չկատարման ժամանակահատվածում Եվրոպական

կենտրոնական բանկի սահմանած՝ փոխառության առավելագույն տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային միավոր.

4. *Մերժում է* դիմումատուի՝ արդարացի հատուցման պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով և գրավոր ծանուցվել է 2016 թվականի նոյեմբերի 10-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ և 3-րդ կետերի:

Ռենատա Դեզեներ
Քարտուղարի տեղակալ

Միրյանա Լազարովա Տրայկովսկա
Նախագահ